

# ՎԱՅՈՒՅՆ ԶՈՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի  
ձեռքբերումները 2007-2011 թվականներին

ՀՏԴ 323 (479.25):36  
ԳՄԴ 66.3 (2Հ) + 65.9 (2Հ) - 94  
Վ 216

Վ 216 **Վայոց Ձոր: Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի ձեռքբերումները 2007-2011 թվականներին.** - Եր.: Տնտես. բարեփոխ. վերլուծական - տեղեկ. կենտրոն, 2012. - 48 էջ:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Վայոց Ձորի մարզում առավել նկատելի ձեռքբերումները՝ տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերը, որոնց շնորհիվ մարզի տնտեսությունն ու հասարակությունը նշանակալի ձեռքբերումներ են ունեցել:

ՀՏԴ 323 (479.25) : 36  
ԳՄԴ 65.3 (2Հ) + 65.9 (2Հ) - 94

**ISBN 978-9939-9065-7-7**

© Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն, 2012

Կազմին՝ Գրիգոր Ազիզյան, Աղբյուր Մալիշկայում (1972)



Տպագրված է «ՄԱՄԱՐԿ» ՍՊԸ տպագրատանը  
Տպաքանակը՝ 3000 օրինակ

# Վայոց Ձոր

Յրաշագեղ է Վայոց Ձորի բնությունը. բարձր լեռներ ու խոր կիրճեր, կարկաչուն գետեր, նազող սահանքներ ու շաչող ջրվեժներ, գալարուն լեռնանցքներ, գահավեժ ժայռեր ու հոյակերտ քարանձավներ: Զարուստ է Վայոց Ձորի բնությունը. Արարիչն, ասես, աշխարհն ստեղծելիս Վայոց Ձորն իրեն ներկայակալ է դարձրել, ու բնության բոլոր գույները խառնել է այս հողում: Եվ մարդը, թերևս, բնության անկրկնելի ստեղծագործություններից ոգեշնչված՝ դեռ անհիշելի ժամանակներում ընդունել է արարչի մարտահրավերն ու արարել իր հանճարի ողջ գործությամբ. վազը գինի է դարձրել, քարը՝ գենթ, քարանձավը՝ ապաստան, վայրի կենդանուն դարձրել է որս ու որսապատկեր, բրոնզից դաշույն ու զարդ է ստեղծել, ձևել է ժայռ ու հագուստ: Թռչունների քարայրում պեղումների արդյունքում հայտնաբերված կաշվե կոշիկը ամենահինն է, որ երբևէ գտնվել է ողջ աշխարհում, իսկ ճգմած խաղողի մնացորդներն ու գինու կարասները ողջ աշխարհում գինու արտադրության ամենահին վկայությունն են:

Վայոց Ձորի ոսկեդարում աշխատասեր ու տաղանդաշատ հայը բազում վանքեր ու եկեղեցիներ կառուցեց, որոնք հայ մշակույթի գանձարանի գոհարներն են՝ Նորավանք ու Գնդեվանք, Սպիտակավոր ու Թանաղե վանք:

Ազատասեր վայոցձորցին բերդեր կառուցեց ու դարեր շարունակ դիմակայեց ալիքի պես եկող ու անցնող նվաճողների ավերումին, որ այս հողում միայն դառը հուշ թողեցին ու անեացան: Նվաճողներից շատերի հիշատակը կորավ դարերի խորքում, իսկ հայրենիքի պաշտպանության համար ելած ու ընկած հերոսների անունն ու հիշատակը սերունդներն անջնջելի են պահում ու նրանց հանգրվանը դարձնում ուխտատեղի:


Ուսումնասեր վայոցձորցին Գլաձոր կառուցեց, հարյուրավոր վարդապետներ կրթեց, և կարողացավ պաշտպանել իր հավատի ու իր ժողովրդի անկախությունը՝ խոսքի ու մտքի ուժով:

Հյուրասեր վայոցձորցին հյուրատներ կառուցեց Մետաքսի մեծ ճանապարհին: Ճանապարհ, որով Արևմուտքը հաղորդվում էր Արևելքին, ճանապարհ, որը քաղաքակրթություններ ու ճակատագրեր էր կապում գլոբալացման դարաշրջանից հարյուրամյակներ առաջ: Վայոցձորցին իր հողում ապաստան տվեց հայրենագուրկ ժողովուրդների գավակներին, տվեց նոր հույս ու նոր տուն և նրանց բախտը կապեց իր բախտին:

## Մարդը

Վայոց Ձորի մարզում 2007-2010 թվականներին շուրջ մեկ տոկոսով **ավելացել է** ծնվածների թվաքանակը, այն դեպքում, երբ նշված ժամանակահատվածում նախորդ տարիներին ծնունդների թիվը Վայոց Ձորում նվազում էր:

Ծնվածների թվաքանակը Վայոց Ձորի մարզում (մարդ)




2002 թվականից սկսած՝ Վայոց Ձորի մարզում **տարեց-տարի ավելացել է** հազար բնակչի հաշվով ծնունդների թվաքանակը:

## 2010 թվականին Վայոց Ձորում ծնելիությունը 2001 թվականի համեմատ ավելացել է 30 տոկոսով:

2007 թվականից սկսած՝ Վայոց Ձորի մարզում **կրճատվել է** բնակչության մահացությունը. 2011 թվականին Վայոց Ձորում հազար բնակչի հաշվով մահացածների թվաքանակը յոթ տոկոսով **պակաս էր**, քան 2006 թվականին: Վայոց Ձորում բնակչության մահացության մակարդակն ավելի ցածր է, քան միջինը հանրապետությունում:

2011 թվականին հանրապետության մարզերում մանկական մահացության **ամենացածր ցուցանիշը Վայոց Ձորում էր. 7.7** մահացած՝ հազար կենդանածնի հաշվով, գրեթե նույնքան, որքան մայրաքաղաք Երևանում:


Ամուսնությունների քանակը Վայոց Ձորի մարզում



Վայոց Ձորում մանկական մահացությունը գրեթե **կիսով չափ պակաս է**, քան միջինում հանրապետությունում: 2011 թվականին մանկական մահացությունը Վայոց Ձորի մարզում երեք անգամ ավելի պակաս էր, քան 2000 թվականին:

Վերջին տասնամյակում Վայոց Ձորի մարզում տարեց-տարի **ավելացել է** ամուսնությունների թիվը: 2011 թվականին Վայոց Ձորում ստեղծվել է գրեթե մեկուկես անգամ ավելի շատ ընտանիք, քան 2002 թվականին: 2011 թվականին տասը հազար բնակչի հաշվով ամուսնությունների **ամենամեծ ցուցանիշը** հանրապետությունում Վայոց Ձորի մարզում էր՝ Կոտայքից հետո: 2011 թվականին տասը հազար բնակչի հաշվով ամուսնությունների թիվը Վայոց

Ամուսնությունների քանակը Վայոց Ձորի մարզում 10,000 բնակչի հաշվով






Ձորում **80 տոկոսով ավելի էր**, քան դարասկզբին:

2011 թվականին Վայոց Ձորի մարզում ամուսնալուծությունների թիվը 2005 թվականի համեմատ **սվազել է** շուրջ մեկ երրորդով:

Վայոց Ձորի մարզում 2003 թվականից ի վեր տարեց-տարի **բարելավվել է** միգրացիայի իրավիճակը. 2007-2010 թվականներին՝ չորս տարում, Վայոց Ձոր եկել է գրեթե նույնքան միգրանտ, որքան 2000-2006 թվականներին՝ յոթ տարում միասին: 2010 թվականին Վայոց Ձոր եկել է **կրկնակի ավելի շատ** մարդ, քան 2006 թվականին: 2010 թվականին Վայոց Ձոր եկող միգրանտների թիվն աննախադեպ բարձր էր վերջին տասնամյակում:

Միաժամանակ, նշված ժամանակահատվածում Վայոց Ձորի մարզում **կրճատվել է** մեկնողների թիվը. 2010 թվականին Վայոց Ձորի մարզից մեկնել է

Վայոց Ձորի մարզ եկողների քանակը (մարդ)






մեկ երրորդով ավելի քիչ մարդ, քան 2003 թվականին: 2010 թվականին մեկնող միգրանտների ամենացածր թվաքանակը հանրապետությունում Վայոց Ձորում էր: Եթե 1999 թվականին Վայոց Ձորում յուրաքանչյուր եկող միգրանտին բաժին էր ընկնում երկու մեկնող, իսկ 2002 թվականին՝ արդեն գրեթե հինգը, ապա արդեն 2010 թվականին 14 մեկնողին բաժին էր ընկնում 10 եկող:

## Տնտեսության սյուները

**Վ**այոց Ձորի մարզում 2002 թվականից ի վեր տարեց-տարի **ավելացել է** արդյունաբերական արտադրանքի ծավալը: Թեպետ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Վայոց Ձորում 2009 թվականին արդյունաբերական արտադրանքի աճը կանգնել էր, այդուհանդերձ, հետագա տարիներին **աճը վերականգնվել է**, և արդեն 2010-2011 թվականներին արդյունաբերական արտադրանքի ծավալի աճն ընթացիկ գներով կազմել է **տարեկան միջինում 10 տոկոսից ավելի**:


Արդյունաբերական արտադրանքի ծավալը Վայոց Ձորի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



**2011 թվականին Վայոց Ձորում հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով հիսնապատիկ գերազանցել է 2005 թվականի ծավալը:**

Վայոց Ձորի մարզում հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալը 2001 թվականից ի վեր **շեշտակի ավելացել է:**

**Հանքագործական արդյունաբերության ծավալները Վայոց Ձորի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)**



2011 թվականին Վայոց Ձորի մարզում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ծավալն ընթացիկ գներով գրեթե **երեքուկես անգամ գերազանցում էր** 2003 թվականի ծավալը:

2011 թվականին Վայոց Ձորի մարզում արդյունաբերական համախառն արտադրանքի ավելի **քան 70 տոկոսը** բաժին էր ընկնում մարզի մշակող արդյունաբերության ձեռնարկություններին:

## 2011 թվականին Վայոց Ձորի մարզում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 2002 թվականի կրկնապատիկն էր:

Հայաստանի ամենափոքր բնակչություն ունեցող Վայոց Ձորի մարզը 2010 թվականին ապահովել է հանրապետության մարզերում թողարկված խմիչքի արտադրության ծավալի 12 տոկոսը:

Համակարգիչների, էլեկտրոնիկայի և օպտիկական սարքավորանքի արտադրության ծավալով Վայոց Ձորը հանրապետությունում երրորդն է՝ գիջելով միայն մայրաքաղաք Երևանին և Արմավիրին:



«Գինով լի բաժակը Նախ պահեք լույսին,— պահանջում է Գետափի գինու գործարանի գլխավոր գինեգործը,— հետո աշխատեք զգալ հոտը, այնուհետև մի փոքր կում արեք՝ համը վաշելելու համար: Լավագույն գինին տարբերվում է իր գույնով, հոտով և համային հատկանիշներով»:

Վաթսուկյորթամյա Էմիլ Մանուկյանը 1966 թվականից աշխատում է Գետափի գինու գործարանում: Ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը: Ուսանողական տարիներին արտադրական պրակտիկան անցկացրել է այս նույն գործարանում, աշխատել գինու արտադրամասում, որպես բանվոր: Բարձրագույն ուսումնական հաստատությունն ավատելուց հետո աշխատում է արդեն հարազատ դարձած գործարանի լաբորատորիայում, որպես միկրոբիոլոգ: Ընդամենը մեկ տարի անց Էմիլ Մանուկյանը նշանակվում է գինու արտադրամասի պետ, իսկ 1976 թվականից՝ գլխավոր գինեգործ:


«Գործարանի ուղղությունը գլխավորապես սեղանի կարմիր գինի արտադրելն է: Խորհրդային տարիներին բազմազան գինիներ ենք արտադրել և՛ վաճառքի համար, և՛ ցանցային մյուս գործարաններին հանձնելու համար: Հիմա շեշտը դրված է «Արենիի» և «Վերնաշենի» վրա: Այս տարվանից աշխատում ենք սպիտակ գինու արտադրության ուղղությամբ,— պատմում է Էմիլ Մանուկյանը,— արդեն ունենք որոշակի քանակությամբ արտադրանք, կարող ենք ասել, որ բավական հաջող է ստացվել, շուտով շուկա կհանենք Նաև այդ տեսականին: «Արենի» սորտի խաղողից ունենք Նաև վարդագույն գինի «Եղեգիս» անվան տակ, շատ հարմար է օգտագործել հատկապես ամառային շոգ եղանակներին»:

Գրեթե 40 տարի այս բնագավառում աշխատած հարգարժան գինեգործը տիրապետում է գործի բոլոր նրբություններին: «Պիտի քիթը ու քիմքը հստակ կարողանա տարբերել, թե ինչ ես խմում: Դա շատ բարդ երևույթ է, պիտի ծանոթ լինես բազմաթիվ հոտերի, ոնց որ պարֆյումի աշխարհում է: Եթե դու դա չիմանաս, դու չես կարող այդ գինին ստեղծել»,— ասում է Էմիլ Մանուկյանը: Ինքն օրինակ կարող է փակ համոտեսի ժամանակ հստակ տարբերակել իրենց արտադրանքը: Նա՝ ով ստեղծում է, պիտի տարբերի իր ստեղծածը օտարներից, ինչպես մայրն է զգում ու տարբերում իր նորածին զավակին մյուսներից: «Դա էլ է արվեստ»,— պնդում է գինեգործը:


Վաստակաշատ գինեգործն ամուսնացած է, ունի երեք զավակ: Միսուճար տղան հետևել է հոր օրինակին՝ միայն թե ընտրելով ոչ թե գինեգործի, այլ կոնյակագործի մասնագիտությունը: Երիտասարդը մասնագիտական հմտությունները կատարելագործելով Մոնպելյեի բարձրագույն գյուղատնտեսական ինստիտուտում, վերադարձել է հայրենիք և աշխատում է Երևանի կոնյակի գործարանում: Էմիլ Մանուկյանի հարսը նույնպես գինեգործ է, աշխատում է Այգեվանի գինու գործարանում, որպես լաբորատորիայի վարիչ: «Պահում ենք ավանդույթները, մասնագիտությունը դառնում է ընտանեկան»,— ծիծաղում է գինեգործ Էմիլը:



Մշակող արդյունաբերության ծավալները Վայոց Ձորի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Խմիչքների արտադրության ծավալները 73 մարզերում, 2010թ.



«Զերմուկ գրուպ», «Զերմուկի մայր գործարան», «Մեգա Արարատ», «Գոլդեն Գոուլթ», «Գետնատուն», «Արենի», «Արենի գյուղ» ընկերությունները պարբերաբար մասնակցում են հանրապետական և արտերկրում, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնությունում, Եվրամիության անդամ երկրներում, ԱՄՆ-ում կազմակերպվող ցուցահանդեսների և նվաճում արտադրանքի բարձր որակի մրցանակներ:

2007 թվականին Վայոց Ձորի Զերմուկ քաղաքում գործարկվել է նորակառույց «Ռեզորտ» առողջարանը, Զերմուկի ջրերի գործարանը:



**«Զերմուկ Գրուպ» ընկերության  
շաղցման արտադրամասում**

2011 թվականից Վայոց Ձորի մարզում կառուցվում են **19 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝** շուրջ երկու միլիարդ դրամ ընդհանուր ներդրումների արդյունքում: Նախագծվում է հողմաէլեկտրակայան:


2009 թվականից, շուրջ **15 միլիոն դոլար** ներդրումների շրջանակներում, Զերմուկ քաղաքում կառուցվում է **SPA կենտրոնով հյուրանոցային համալիր**, որը կգործարկվի 2013 թվականին: Այն հյուրանոցային բազմաֆունկցիոնալ մեծ համալիր է, որտեղ ամենաժամանակակից ջրաբուժարաններ են նախատեսված, տարբեր տեսակի լողավազաններ, կոնֆերանսների դահլիճներ, բացօթյա սրճարան: Շենքն, ընդհանուր առմամբ, կունենա հյուրանոցային **84 համար**, որից 8-ը՝ լյուքս:

**Վ**այոց Ձորի մարզում 2004 թվականից **վերականգնվել է** խաղողագործությունը, որը մինչև 2003 թվականը նշանակալի անկում էր ապրել: 2004-2011 թվականներին Վայոց Ձորում **ընդլայնվել են** խաղողի տնկարկների տարածությունները:


**2010 թվականին Վայոց Ձորի մարզում խաղողի տնկարկների տարածությունները 2003 թվականի համեմատ մեկուկես անգամ ավելի էին:**

## 2011 թվականին Վայոց Ձորի մարզում ստացվել է խաղողի գրեթե նույնքան համախառն բերք, որքան 2001-2003 թվականներին՝ երեք տարում միասին:

խաղողի տնկարկների տարածությունը Վայոց Ձորի մարզում (հա)




խոզերի գլխաքանակը Վայոց Ձորի մարզում (հազ. գլուխ)



2011 թվականին Վայոց Ձորում ստացվել է խաղողի **ավելի շատ բերք**, քան նախկին տարիներին:

2004-2011 թվականներին խոզերի գլխաքանակը Վայոց Ձորի մարզում **եռապատկվել է**:

Հավկիթի արտադրության ծավալները Վայոց Ձորի մարզում (մլն. հատ)



2011 թվականին Վայոց Ձորի մարզում արտադրվել է **երկու անգամ ավելի** հավկիթ, քան 2001 թվականին և մեկ բառորդով ավելի, քան 2008 թվականին:

2010 թվականին Վայոց Ձորի **Սալլի, Աղավնաձոր, Չիվա, Արփի և Չառիթափ** համայնքներում կառուցվել են 210 տոննա ընդհանուր տարողությամբ մրգերի և բանջարեղենի պահպանության սառնարաններ, իսկ **Ելփինի** համայնքում՝ մրգերի և բանջարեղենի չորացման արտադրամաս:

2009-2010 թվականներին Վայոց Ձորի մարզում **«Թամարա ֆրուլթ»** ընկերությունը **Հոփիկ** հանդամասում հիմնել է 4 հեկտար կեռասենու, սալորենու և 7 հեկտար ազնվամորու և մոշի այգիներ՝ օգտագործելով Հոլանդիայից ներկրված բարձրորակ սորտեր:

2007-2011 թվականներին Վայոց Ձորի **22 համայնքներում** հիմնանորոգվել են ոռոգման համակարգեր. ջրանցքներ և ջրավազաններ, ջրագծեր և ջրատարեր, կառուցվել են երրորդ կարգի ջրանցքներ: Միայն 2011 թվականին Վայոց Ձորի **Եղեգնաձոր, Գլաձոր, Վերնաշեն, Աղավնաձոր, Ռինդ և Խաչիկ** համայնքներում վերանորոգվել է ավելի քան 19 կիլոմետր ընդհանուր երկարությամբ երրորդ կարգի ջրանցք:

2010-2011 թվականներին Վայոց Ձորի մարզի գյուղացիական

տնտեսություններին տրամադրվել է **ավելի քան 15 տարբեր հզորության անիվավոր տրակտոր:**

2010-2011 թվականներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Վայոց Ձորի մարզի գյուղացիական տնտեսություններին տրամադրել է շուրջ **65 տոննա գարու**, այդ թվում՝ 40 տոննա էլիտար և 20 տոննա առաջին վերարտադրության, մեկ տոննա եգիպտացորենի և **55 տոննա առաջին վերարտադրության սերմացու:**

2010-2011 թվականներին Վայոց Ձորի մարզում մշակաբույսերի մուցման համար գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է **220 տոննա ազոտական պարարտանյութ:**

2010-2011 թվականներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Վայոց Ձորի մարզի գյուղացիական տնտեսություններին տրամադրել է 300 կիլոգրամ ցինկի ֆոսֆիդ մկնասպան թունանյութ՝ **Խաչիկ, Չիվա, Ռինդ, Արին, Ագատեկ, Չեդեա, Գետափ, Աղավնաձոր, Հերիեր, Արփի, Արենի, Եղեգնաձոր, Բարձրունի, Սարավան** համայնքներում ընդհանուր առմամբ **2,400 հեկտար** հողատարածքի վրա մկնանման կրծողների դեմ պայքարելու նպատակով:

2010-2011 թվականներին Վայոց Ձորի մարզի գյուղացիական տնտեսություններին գյուղատնտեսության փոխօգնության բանկը տրամադրել է **ավելի քան 950 միլիոն դրամ ընդհանուր ծավալով** վարկեր, ընդ որում, 2011 թվականին վարկավորման ծավալն ավելացել է շուրջ 15 տոկոսով:




Ռուբիկ Առաքելյան, 2005 թվականից աշխատում է Արենիի գինու գործարանում: «Ես ծնունդով Արենիից եմ: Մեր գործարանում աշխատել եմ դեռ դպրոցական տարիներից: Ամռան ամիսներին գալիս խաղող էինք թափում, գինի էինք լցնում, գումար էինք վաստակում: Հիմնական աշխատանքի ընդունվել եմ բանակից վերադառնալուց հետո: Արդեն յոթ տարի է աշխատում եմ Եստեղ, որպես բանվոր: Ընտանիք ունեմ, ամուսնացած եմ, մեկ տղա ունեմ: Դռանս առաջին հողամաս կա, այգի ունեմ, բայց իմ համար կարևորը գործարանի աշխատանքս է: Գոնե գիտեմ, որ ամեն ամիս աշխատավարձ եմ ստանում, կարողանում եմ ընտանիք պահել: Եթե Ես աշխատանքը չլինեի, ես շատ շուտովանից դրսում էի: Ռուսաստանում աշխատանք կար, կարայի գնայի, բայց ավելի լավա ես իմ տան, դռան առաջին աշխատեմ, քան դրսում: Նորմալ վարձատրում եմ, ապրում ենք էլի, ոչ մի բանից հետ չենք մնում, չեմ ասում թե շատ լավ, բայց, միջին չափով, մարդավարի ապրում ենք»:




Վայոց Ձորի մարզում 2011 թվականին գործել է մանրածախ առևտրի ավելի մեծ թվով օբյեկտ քան երբևէ: 2004-2011 թվականներին Վայոց Ձորում մանրածախ առևտրի օբյեկտների թիվն ավելացել է երեք քառորդով:

Առևտրի օբյեկտների քանակը Վայոց Ձորի մարզում (միավոր)




2011 թվականին Վայոց Ձորի մարզում միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը գրեթե յոթապատիկ ավելի էր, քան 2000 թվականին, կրկնակի ավելի, քան 2004 թվականին:

Մանրածախ առևտրի շրջանառությունը Վայոց Ձորի մարզում (մլն. դրամ)




Միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը Վայոց Ձորի մարզում (դրամ)



Մանրածախ առևտրի շրջանառությունը Վայոց Ձորում տարեց-տարի **ավելացել է** ընդհուպ մինչև 2008 թվականի ֆինանսա-տնտեսական ճգնաժամը, որի ալիքները զգալիորեն հարվածեցին հանրապետության և մարզի տնտեսությանը: Այդուհանդերձ, արդեն 2010 թվականին մանրածախ առևտրի շրջանառությունը մեկ տարում **աճեց** մեկ հինգերորդով:

## 2011 թվականին Վայոց Ձորի մարզում գործում էր քառապատիկ ավելի շատ խանութ, քան 2004 թվականին:

Ծառայությունների ծավալը Վայոց Ձորի մարզում (մլն. դրամ)




## 2006-2010 թվականներին Վայոց Ձորի մարզում կրթության ծառայությունների ծավալը կրկնապատկվել է:

Թեպետ 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Վայոց Ձորում միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը 2009 թվականին՝ մեկ տարում, կրճատվել էր գրեթե 70 տոկոսով, այդուհանդերձ, հետագա տարիներին մարզում մեկ շնչի հաշվով առևտրաշրջանառության աճը վերականգնվել է և արդեն 2010 թվականին նախորդ տարվա համեմատ աճը **գերազանցել է 20 տոկոսը**:

2000 թվականից սկսած խանութների թիվը Վայոց Ձորի մարզում ավելացել է տարեց-տարի՝ ընդհուպ մինչև 2008 թվականի ֆինանսա-տնտեսական ճգնաժամը, որի արդյունքում 2009 թվականին դրանց թիվը մեկ տարում

Տեղեկատվության և կապի ծառայությունների ծավալը Վայոց Ձորի մարզում (մլն. դրամ)



կրճատվեց մեկ հինգերորդով: Այդուհանդերձ, արդեն 2010 թվականին Վայոց ձորում գործում էր շուրջ մեկ հինգերորդով **ավելի շատ խանութ**, քան նախաճգնաժամային 2007 թվականին:

2004-2011 թվականներին Վայոց Ձորի մարզում ծառայությունների ծավալն **ավելացել է 3.7 անգամ**: 2011 թվականին Վայոց Ձորի մարզում ծառայությունների ծավալը նախաճգնաժամային 2007 թվականի ծավալի **կրկնապատիկն էր**, իսկ 2009 թվականի համեմատ ավել էր շուրջ 30 տոկոսով:

2011 թվականին Հայաստանում մեկ շնչի հաշվով ծառայությունների ծավալով Վայոց Ձորը զիջում էր միայն մայրաքաղաք Երևանին և Կոտայքի մարզին:

2004-2010 թվականներին Վայոց Ձորի մարզում տեղեկատվության և կապի ծառայությունների ծավալն **ավելացել է երկուսուկես անգամ**:


## 2010 թվականին հանրապետության մարզերում բնակչության մեկ շնչի հաշվով տեղեկատվության և կապի ծառայությունների ամենամեծ ծավալը Վայոց Ձորում էր:

### Ենթակառուցվածքները

Վայոց Ձորի մարզում ավելացել է ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը. 2010 թվականին Վայոց Ձորում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը 2000 թվականի **կրկնապատիկն էր**: 2007-2010 թվականներին՝ չորս տարում, Վայոց ձորում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվել են գրեթե **սույնքան ընդհանուր ծավալով բեռներ**, որքան 1998-2005 թվականներին՝ ութ տարում:

2010 թվականին Վայոց Ձորի մարզում ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառությունը հասել է 22 միլիոն կիլոմետր-տոննա **աննախադեպ ծավալի**: 2007-2010 թվականներին՝ չորս տարում, Վայոց Ձորում

Բեռնափոխադրությունների ծավալը Վայոց Ձորի մարզում (հազ. տոննա)



## 2010 թվականին Վայոց Ձորի մարզում ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2005 թվականի կրկնապատիկն էր և 2001 թվականի քառապատիկը:


բեռնաշրջանառությունը գերազանցել է 1998-2006 թվականների ինը տարվա բեռնաշրջանառության ընդհանուր ծավալը:

Բեռնաշրջանառությունը Վայոց Ձորի մարզում (մլն. տոննա-կմ)



2004 թվականից Վայոց Ձորի մարզում տարեց-տարի **ավելացել է**, նախորդ ժամանակահատվածում աստիճանաբար նվազած, ուղևորափոխադրումների

Ուղևորափոխադրությունների ծավալը Վայոց Ձորի մարզում (հազ. մարդ)





## 2010 թվականին Վայոց ձորում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվել է գրեթե քառապատիկ ավելի ուղևոր, քան 2003 թվականին:

Ծավալը: Եթե 2003 թվականին 1998 թվականի համեմատ Վայոց ձորում ուղևորափոխադրության ծավալը **սվազել էր** շուրջ երկուսուկես անգամ, ապա հետագա տարիներին տնտեսության ակտիվացման, զբոսաշրջության զարգացման և ուղևորափոխադրումների բնագավառում կառավարման արդյունավետության բարձրացման արդյունքում, այն Եականորեն ավելացել է. 2009-2010 թվականներին Վայոց Ձորի մարզում փոխադրվել է շուրջ կես միլիոն ուղևոր, **ավելի՞ քան երբևէ:**

2010 թվականին Վայոց Ձորի մարզում ուղևորափոխադրումների ծավալը **գերազանցել է** նախաճգնաժամային 2006 թվականի ծավալը 70 տոկոսով:


---

**2007-2011 թվականներին Վայոց Ձորի մարզում կատարված կապիտալ ներդրումների շուրջ մեկ երրորդն ուղղվել է ճանապարհաշինությանը. նշված ժամանակահատվածում Վայոց Ձորում հիմնանորոգվել են միջպետական մայրուղիների, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ, համայնքներում՝ փողոցներ:**

**2007-2011 թվականներին հանրապետության մարզերում ավտոմոբիլային ճանապարհների և ինժեներական կառույցների հիմնանորոգմանն ուղղված կապիտալ ներդրումների մեկ վեցերորդը հատկացվել է Վայոց Ձորին:**

---

Ճանապարհաշինության ուղղված կապիտալ ծախսերը Վայոց Ձորի մարզում 2007-2011 թթ. իրականացված կապիտալ ծախսերի ընդհանուր ծավալում



2007-2011 թվականներին **Եղեգնաձոր, Սարավան, Շատին, Սալլի, Արփի, Ելփին, Թառաթումբ** համայնքներում վերականգնվել են ավտոճանապարհների փլված հատվածներ:

Նույն ժամանակահատվածում Վայոց Ձորի մարզի **Խաչիկ, Սերս, Շատին, Չառիթափ, Զարագուխ, Ազատեկ, Հորս, Աղավնաձոր** համայնքներում հիմնանորոգվել են ավտոմոբիլային ճանապարհներ, **Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ** քաղաքներում վերանորոգվել, ասֆալտապատվել և բարեկարգվել են փողոցներ, նորոգվել է միջպետական մայրուղու տարածքում գտնվող կամուրջը **Գետափ** համայնքում:

2011 թվականին Վայոց Ձորի մարզում **«Հայփոստ»** ընկերությունը բացել է **Եղեգնաձոր** քաղաքի փոստային մասնաճյուղը և փոստային բաժանմունքը,



**Մալիշկա** համայնքի և **Վայք** քաղաքի փոստային հիմնանորոգված բաժանմունքները: Բաժանմունքներում նորացվել են աշխատանքային չափորոշիչները, փոխվել և նորացվել են ենթակառուցվածքները, տեղադրվել են արդի ծրագրերին համապատասխանող նոր համակարգիչներ, նորացվել է մալուխային համակարգը:

2011 թվականին **Զերմուկ** և **Եղեգնաձոր** քաղաքներում հասանելի էր **«ԶիԷՆՍի-Ալֆա»** ընկերության համապետական ծածկույթի **10 Գբ/վ** թողունակությամբ IP/MPLS ցանցը՝ հագեցված ամերիկյան Juniper Networks արտադրության գերժամանակակից սարքավորումներով, ինչը հնարավորություն է ընձեռում մատուցել IP տարանցման, ինտերնետ հասանելիության, տվյալների հաղորդման, վիրտուալ մասնավոր ցանցերի (VPN) և այլ ծառայություններ շարժական կապի օպերատորներին, Ինտերնետ ծառայություն մատուցողներին և կորպորատիվ հաճախորդներին:

Եթե 1999 թվականին Վայոց Ձորի մարզում գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունն ընդամենը 25 կիլոմետր էր, ապա 2011 թվականին՝ **ավելի քան 137 կիլոմետր**: 2011 թվականին Վայոց Ձորում գործել է **երեք անգամ ավելի երկարությամբ** գազի բաշխիչ ցանց, քան 2000 թվականին և մեկ երրորդով ավելի երկար, քան 2007 թվականին:


## 2011 թվականին Վայոց Ձորի մարզի գյուղական համայնքներում գազամատակարարման գործող ցանցի միագիծ երկարությունը 2003 թվականի համեմատ տասնապատիկ ավելի էր:

2011 թվականի տարեսկզբին Վայոց Ձորի մարզում գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը 2002 թվականի համեմատ **ավելացել է երեքուկես անգամ**՝ 2 հազարից հասնելով 7 հազարի: 2006-2011 թվականներին մարզի գյուղական համայնքներում գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակն ավելացել է 2.8 անգամ:


Եթե 2002 թվականին Վայոց Ձորի գյուղական համայնքներում գազաֆիկացված էր յուրաքանչյուր հազար բնակարանից և բնակելի տնից երեքը, իսկ քաղաքային համայնքներում՝ երեքից մեկը, ապա 2011 թվականի



Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Վայոց Ձորի մարզում (կմ)




Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Վայոց Ձորի մարզի գյուղական վայրերում (կմ)




տարեսկզբին մարզի գյուղական համայնքներում գազամատակարարումից օգտվելու հնարավորություն ուներ յուրաքանչյուր հարյուրից տասնհինգը, իսկ քաղաքային համայնքներում՝ **տասից ինը** բնակարան և բնակելի տուն:

**2010 թվականին Վայոց Ձորում սպառողներին մատակարարվել է չորսուկես անգամ, իսկ մարզի գյուղական համայնքներում՝ ավելի քան երեքհարյուրապատիկ մեծ ծավալով բնական գազ, քան 2001 թվականին:**

Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը Վայոց Ձորի մարզում (միավոր)



Բոլոր սպառողներին բաց թողնված գազը վայոց Ձորի մարզում (մլն. խմ)



Նախորդ տասնամյակում Վայոց Ձորի մարզում **նշանակալիորեն ավելացել է** սպառողներին մատակարարված գազի ծավալը: 2006-2010 թվականներին Վայոց Ձորի մարզի գյուղական համայնքներում սպառողներին մատակարարված գազի ծավալը **հնգապատիկ ավելացել է**:

2007-2011 թվականներին Վայոց Ձորի մարզում գազաֆիկացվել են **Վայք** քաղաքի Մոզի երկրորդ թաղամասը, **Եղեգնաձոր** քաղաքում՝ Նոր-Ավան թաղամասը, **Վերնաշեն, Գլաձոր, Չամիթափ, Փոռ, Գետափ, Սալիշկա, Զերիեր** համայնքները:

**Աղավաճող** համայնքում կառուցվել է շուրջ 10 կիլոմետր ընդհանուր երկարությամբ գազատար, տեղադրվել են սարքավորումներ: Արփի համայնքում մոնտաժվել է շուրջ 12 կիլոմետր ընդհանուր երկարությամբ խողովակաշար:


2011 թվականին Վայոց Ձորի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում, անվտանգության ապահովման նպատակով, շուրջ 3 հազար առանձնատներում և շուրջ 4 հազար բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններում տեղադրվել է շուրջ **7 հազար** անվտանգության ազդանշանիչ համակարգ:

2012 թվականի տարեսկզբին Վայոց Ձորի մարզի **քաղաքային երեք և գյուղական ինը** համայնքներին մատակարարվում է բնական գազ:

**Վ**այոց Ձորի մարզում 2010 թվականին խմելու ջրի մատակարարման միջթաղային և միջբակային ցանցի ընդհանուր երկարությունը 2001 թվականի համեմատ **ավելացել է** մեկ վեցերորդով:

2002-2010 թվականներին Վայոց Ձորի մարզում ջրամատակարարման ցանցում կատարված աշխատանքների և կառավարման ավելի արդյունավետ համակարգերի ներդրման արդյունքում **կրճատվել են** խմելու ջրի կորուստները. 2010 թվականին Վայոց Ձորում սպառված ջրի ծավալը 2002 թվականի համեմատ **կրճատվել է** ավելի քան կիսով չափ:

**Կոյուղու համակարգի փողոցային ցանցի միագիծ երկարությունը Վայոց Ձորի մարզում (կմ)**



2010 թվականին Վայոց Ձորի մարզում կոյուղու համակարգի փողոցային ցանցի երկարությունը մեկ քառորդով **ավելի էր**, քան 2003 թվականին:

2007-2011 թվականներին Վայոց Ձորի մարզի քաղաքային և գյուղական **33 համայնքներում** իրականացվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնանորոգման ծավալուն աշխատանքներ. կառուցվել և հիմնանորոգվել է շուրջ **80 կիլոմետր** ընդհանուր երկարությամբ ջրագիծ: Մասնավորապես, **Յորբաստեղ, Արտաբույնք, Արին** համայնքներում կառուցվել են ջրամատակարարման ջրագծեր, **Ռինդ** համայնքում՝ կոյուղագիծ:

2007-2011 թվականներին Վայոց Ձորի մարզի **Եղեգնաձոր, Արենի, Աղավնաձոր, Փոռ, Գողթանիկ, Մարտիրոս, Քարագյուլիս, Վերնաշեն, Աղնշաձոր, Սարավան, Դերիեր, Դորս, Ազատեկ, Զիվա, Սերս, Չեղեա, Գոմք, Խնձորուտ, Ելփին, Բարձրունի, Նոր Ազնաբերդ, Շատին, Սալլի, Արփի, Ռինդ, Խաչիկ, Չառիթափ, Թառաթումբ, Գետափ, Մալիշկա** համայնքներում հիմնանորոգվել են ջրամատակարարման ցանցերը, ջրամբարներ, կառուցվել են կապատաժներ և սանիտարական գոտիներ:

2011 թվականին վերանորոգվել է **Զերմուկ** քաղաքի կոյուղու ցանցի **3.3 կիլոմետր** երկարությամբ հատվածը, կառուցվել է կեղտաջրերի մաքրման կայան:

**Վ**այոց Ձորի մարզում 2003-2010 թվականներին շուրջ 13 տոկոսով **ավելացել է** քաղաքային համայնքներում փողոցների, անցումների և իրապարակների ընդհանուր մակերեսը:

2011 թվականին հիմնովին կարգի են բերվել **Վայք** և **Եղեգնաձոր** քաղաքների աղբավայրերը: 2010-2011 թվականներին Եղեգնաձոր քաղաքում ձեռք է բերվել **60 աղբաման**, պատրաստվել և տեղադրվել է **50 աղբարկղ**:

**Արփի** համայնքում մաքրվել է սելավատարը: **Զերմուկ** քաղաքում հիմնանորոգվել է արտաքին լուսավորության ցանցը, վերակառուցվել են քաղաքի կենտրոնական մատուռ լճակների և գետակների հենապատեր:



2010 թվականին **Վայք** և **Եղեգնաձոր** քաղաքների աղբանոցների մաքրված տարածքներում տնկվել է 300 բարդենու տնկի:


2010 թվականին Վայոց Ձորի մարզում անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումները **սվազել են** ավելի քան երեք քառորդով:

## Տունը

**Վ**այոց Ձորում 2011 թվականին բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը 2001 թվականի համեմատ **ավելացել է 60 տոկոսով**, իսկ մարզի գյուղական համայնքներում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը նույն ժամանակահատվածում ավելացել է շուրջ 80 տոկոսով:

2011 թվականին Վայոց Ձորի գյուղական համայնքներում մեկ բնակչի


Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը Վայոց Ձորի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերում (հազ. քմ)




## Հայաստանում 2011 թվականին ընդհանուր մակերեսով մեկ բնակչի ապահովվածությամբ Վայոց Ձորն առաջինն է՝ շուրջ 39.5 քառակուսի մետր:

ապահովվածությունն ընդհանուր մակերեսով կազմել է ավելի, քան 45.2 քառակուսի մետր, ինչն **ամենաբարձրն է** երկրում:

Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով 33 մարզերում, 2011թ. (քմ)




Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով Վայոց Ձորի մարզում (քմ)



2011 թվականին Վայոց Ձորում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր

մակերեսով 2000 թվականի համեմատ **ավելացել է երկուսուկես անգամ**, իսկ մարզի քաղաքային համայնքներում նույն ժամանակահատվածում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով **ավելացել է գրեթե երեքուկես անգամ**:

2011 թվականին Վայոց Ձորի մարզի քաղաքային բնակավայրերում բազմաբնակարանային շենքերի բնակարանների քանակը 2002 թվականի համեմատ **ավելացել է** շուրջ ութ, իսկ դրանց ընդհանուր մակերեսը՝ տասը տոկոսով: Նույն ժամանակահատվածում Վայոց Ձորի գյուղական համայնքներում բնակելի տների (առանձնատների) քանակը նույնպես ավելացել է շուրջ ութ տոկոսով, իսկ դրանց ընդհանուր մակերեսը՝ **ավելի քան 85 տոկոսով**:



2010 թվականին Վայոց Ձորի մարզում բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2000 թվականի համեմատ **ավելացել է կրկնակի**: Նույն ժամանակահատվածում Վայոց

**2010 թվականին Վայոց Ձորի մարզում հողերի, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության, առուվաճառքի գործարքների քանակը 2002 թվականի համեմատ տասներեքապատիկն էր:**

Ձորում բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն **ավելացել է վեցապատիկ**:

2010 թվականին Վայոց Ձորի մարզում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2005 թվականի համեմատ **ավելացել է** մեկ երրորդով:


2007-2011 թվականներին Վայոց Ձորի մարզի **Քարագլուխ, Գետափ** համայնքներում կառուցվել է երեք բնակարան, **Եղեգնաձոր, Վայք** և **Ջերմուկ** քաղաքներում հիմնանորոգվել են ավելի քան 30 բազմաբնակարան շենքերի տանիքներ: **Մարտիրոս, Խաչիկ** և **Շատին** համայնքներում սողանքներից և քարափլուզումներից տուժած շուրջ 60 ընտանիքի տրամադրվել են գումարներ:

## Աշխատանքն ու վարձատրությունը

Վայոց Ձորի մարզում աշխատողների վարձատրության մակարդակը տարեց-տարի **ավելացել է**: 2003-2010 թվականներին Վայոց Ձորում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձն ավելի քան **եռապատկվել է**:

Աշխատատեղերի ստեղծման և զբաղվածության աստիճանական ընդլայնման արդյունքում Վայոց Ձորի մարզում աստիճանաբար **կրճատվել է** չզբաղված, այդ թվում՝ գործազուրկ քաղաքացիների թիվը: 2003-2010 թվականներին

Աշխատողների միջին անվանական աշխատավարձը  
Վայոց Ձորի մարզում (հազ. դրամ)





զբաղված քաղաքացիների թիվը Վայոց Ձորում **սվազել է** ավելի քան կիսով չափ:

2010 թվականին Վայոց Ձորի մարզում զբաղվածների 70 տոկոսն աշխատում էր գյուղատնտեսության, իսկ մեկ հինգերորդից ավելին՝ ծառայությունների ոլորտում:

2007-2010 թվականներին Վայոց Ձորի մարզում աշխատանքի է տեղավորվել շուրջ **2 հազար**, իսկ վարձատրվող աշխատանքներում ընդգրկվել է շուրջ **850** գործազուրկ:


## Կրթությունը

**Վ**այոց Ձորի նախադպրոցական հաստատություններում տեղերի քանակը 2010 թվականին 2006 թվականի համեմատ **ավելացել է** մեկ հինգերորդով:

2010 թվականին Վայոց Ձորի մարզի քաղաքային համայնքներում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակը 2001 թվականի համեմատ **ավելացել է** մեկ երրորդով:

2010 թվականին Վայոց Ձորի նախադպրոցական հաստատություններում մանկավարժների թվաքանակը 2003 թվականի համեմատ **ավելացել է** 38 տոկոսով:

Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների քանակը Վայոց Ձորի մարզում



2010 թվականին Վայոց Ձորում մեկ նախադպրոցական հաստատություն միջին հաշվով հաճախել է **կրկնակի ավելի շատ** երեխա, քան 2001 թվականին:

2010 թվականին Վայոց Ձորի նախադպրոցական հաստատություններում երեխաների հիվանդացության դեպքերի քանակը 2007 թվականի համեմատ **նվազել է** ավելի քան մեկ քառորդով:


## Վայոց Ձորի մարզը նայաստանում միակն է, ուր 2000 թվականից ի վեր հանրակրթական դպրոցների թիվը երբևէ չի նվազել:

2010/2011 ուսումնական տարում Վայոց Ձորի մարզի հանրակրթական դպրոցներում դասավանդող մանկավարժների թվաքանակը 2005/2006 ուսումնական տարվա համեմատ **ավելացել է** մեկ վեցերորդով:

## 2010/2011 ուսումնական տարում Վայոց Ձորի մարզում գործել են կրկնակի ավելի մեծ թվով երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, քան 2004/2005 ուսումնական տարում:

2010/2011 ուսումնական տարում Վայոց Ձորի մարզում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների աշակերտների թիվը 2001/2002

Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ հաճախող երեխաների թվաքանակը Վայոց Ձորի մարզում




ուսումնական տարվա համեմատ **ավելացել է** մեկ երրորդով: Նույն ժամանակահատվածում Վայոց Ձորի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում անվճար ուսուցման համակարգում սովորողների թվաքանակն **ավելացել է երկուսուկես անգամ:**

2009 թվականին Վայոց Ձորի մարզում բացվել է **առաջին** նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատությունը:

## 2010 թվականին Վայոց Ձորի մարզում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում էր կրկնակի ավելի շատ ուսանող, քան 2001 թվականին:

2001 թվականին Վայոց Ձորում գործում էր մեկ, իսկ 2004 թվականին՝ արդեն երեք միջին մասնագիտական ուսումնական հաստատություն:




## 2010 թվականին Վայոց Ձորի մարզում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվել է քառապատիկ ավելի մեծ թվով ուսանող, քան 2002 թվականին:



Եղեգևաձորի «Գիտելիք» համալսարանը

Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածների թվաքանակը Վայոց Ձորի մարզում (մարդ)



2010 թվականին Վայոց Ձորի մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդող դասախոսների թվաքանակը 2005 թվականի համեմատ ավելացել է գրեթե երեքուկես անգամ:

2010 թվականին Վայոց Ձորի միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդել է **3.7 անգամ ավելի շատ** մանկավարժ, քան 2004 թվականին:

2010/2011 ուսումնական տարում Վայոց Ձորի մարզում գործող բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորել է **կրկնակի** շատ ուսանող, քան 2005/2006 ուսումնական տարում:

.....  
2007-2011 թվականներին Վայոց Ձորի մարզի քաղաքային և գյուղական շուրջ **25 համայնքներում** հիմնանորոգվել են կրթական հաստատություններ, մասնավորապես՝ **Եղեգնաձոր, Վայք, Խաչիկ, Սալլի, Զերմոն, Զիվա, Մարտիրոս, Աղավնաձոր, Արտավան, Զերհեր, Սերս, Խնձորուտ, Վերնաշեն, Զորբատեղ, Ագատեկ, Ագարակաձոր, Զառիթափ, Ռինդ, Արփի, Զարագուխ, Ելփին, Մալիշկա, Զերմուկ, Շատին** համայնքներում հիմնանորոգվել են հանրակրթական դպրոցներ, **Աղավնաձոր** համայնքի մանկապարտեզը, վարժարաններ **Եղեգնաձոր** և **Վայք** քաղաքներում:

**Ելփին** և **Զիվա** համայնքներում դպրոցների շենքերում ստեղծվել են նախակրթարաններ՝ հատուկ առանձնացված տարածքում: Յուրաքանչյուր նախակրթարան հաճախում է 20 երեխա:

.....  
Հիմնանորոգվել և ժամանակակից տեխնիկական միջոցներով վերազինվել է Վայոց ձորի տարածաշրջանային բոլեջը **Եղեգնաձորում**:

.....  
2012 թվականի տարեսկզբին Վայոց Ձորի մարզում հանրակրթական բոլոր դպրոցներն



**Միջնախաղ Զերմուկի շախմատի դպրոցում**



**Մալիշկայի վերանորոգված դպրոցը**



ունեն համակարգիչներ, շուրջ **20 դպրոցում** գործում են համակարգչային դասարաններ, որոնք օգտվում են ինտերնետ կապից:

2010-2011 թվականներին Վայոց Ձորի մարզում **11 երթուղիներով** ապահովվել է մանկավարժների և դպրոցահասակ երեխաների փոխադրումը:

**Հայաստանի Պետական Տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը** հիմնադրվել է 2008 թվականին. հիմնադրման օրվանից մասնաճյուղում դասավանդվում է **«գբոսաշրջության կառավարում»** մասնագիտությունը:

2010 թվականին «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» առարկաներից ավագ դպրոցների 10-րդ դասարաններում անցկացված արտաքին ընթացիկ գնահատման **լավագույն արդյունքը** հանրապետությունում գրանցվել է Վայոց Ձորի մարզում:

2011 թվականին Վայոց Ձորի հանրակրթական դպրոցների շուրջ **30 աշակերտ** մասնակցել է առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին, նրանցից յոթը պարգևատրվել են գովասանագրերով և դիպլոմներով:



Ծնունդով վայքեցի Արա Չափարյանը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղի գբոսաշրջության կառավարում բաժինն ընտրել է ծնողների խորհրդով: Տասնութամյա երիտասարդն ինստիտուտն ավարտելուց հետո մտածում է աշխատանք գտնել հենց Վայքում կամ Եղեգնաձորում, որտեղ արդեն երեք տարի է գործում են տուրիստական կենտրոններ: «Դպրոցական տարիքից ինձ հետաքրքրում էր ամեն ինչ, ինչ վերաբերում էր գբոսաշրջությանը, դրա համար էլ որոշեցի այս բաժինն ընտրել: Բացի դրանից, Վայոց ձորի մարզում զարգացող ճյուղ է տուրիզմը, հեռանկարներ կա, սա էլ կարևոր հանգամանք էր իմ ընտրության համար,- ասում է Արա Չափարյանը,- ես ինձ առավել տեսնում եմ սպասարկման ոլորտում: Կարծում եմ, որ աշխատանք կունենամ հյուրանոցային ցանցում: Ես սիրում եմ մեր տարածաշրջանը, լավ ճանաչում եմ, բայց գբոսաշրջավար դժվար աշխատեմ: Ամեն դեպքում կմնամ մարզում: Այստեղ ևս բարձրագույն կրթությունն ստացած կադրերի կարիք ունեն»:


## Առողջապահությունը

Վայոց Ձորի մարզում 2010 թվականին բժիշկների թվաքանակը տասը հազար բնակչի հաշվով 2001 թվականի համեմատ **ավելացել է** մեկ երրորդով:

### Հանրապետության մարզերում բժիշկների ամենաբարձր թվաքանակը տասը հազար բնակչի հաշվով Վայոց Ձորում է:

2004-2010 թվականներին Վայոց Ձորի մարզում միջին բուժանձնակազմի թվաքանակն **ավելացել է** մեկ երրորդով: Հանրապետության մարզերում տասը հազար բնակչի հաշվով միջին բուժանձնակազմի թվաքանակով Վայոց Ձորը երրորդն է՝ Շիրակից և Սյունիքից հետո: 2010 թվականին Վայոց Ձորի մարզում միջին բուժանձնակազմի թվաքանակը տասը հազար բնակչի հաշվով 2004 թվականի համեմատ **ավելացել է** մեկ երրորդով:

Բժիշկների թվաքանակը 10,000 բնակչության հաշվով Վայոց Ձորի մարզում



2010 թվականին Վայոց Ձորում գործում էր ինը ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ՝ մեկով ավելի, քան 2004 թվականին: 2010 թվականին Վայոց Ձորի մարզում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը տասը հազար բնակչի հաշվով 2001 թվականի համեմատ **ավելացել է** մեկ երրորդով:

Վայոց Ձորի մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում **ավելացել է** հաճախումների քանակը. 2010 թվականին Վայոց Ձորի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում 2003 թվականի համեմատ հաճախումների թիվն ավելացել է շուրջ 44 տոկոսով:

2010 թվականին հանրապետության մարզերում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ մեկ շնչի հաշվով հաճախումների քանակով Վայոց Ձորը զիջում էր միայն Սյունիքին: Վայոց Ձորի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ մեկ շնչի հաշվով հաճախումների քանակը 2001 թվականի համեմատ **ավելացել է** մեկուկես անգամ, իսկ 2007 թվականի համեմատ՝ գրեթե մեկ հինգերորդով:

2007-2011 թվականներին հիմնանորոգվել են հիվանդանոցներ **Եղեգնաձոր** և **Վայք** քաղաքներում, **Ջերմուկ** քաղաքում կառուցվել է ջրաբուժարան և առողջության պահպանման կենտրոն, **Արենի** համայնքում կառուցվել է թշկական ամբուլատորիա:

2011 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Վայոց Ձորի մարզում առողջապահական հիվանդանոցային հաստատություններին հատկացրել է **չորս ռեանիմոբիլ շտապ օգնության ավտոմեքենա՝** ավելի քան 60 միլիոն դրամ արժեքով:

2010-2011 թվականներին Վայոց Ձորի մարզում պատվաստման տարբեր տեսակների գծով իմունականիսարգելման աշխատանքներում բնակչության ընդգրկվածությունը կազմել է 99%:




Էվսիկ Թովմասյանը Գյումրիից է: Հիսունյոթամյա կինը «Ջերմուկ աշխարհ» առողջարանային համալիրում բուժումներ է ստանում նյութափոխանակության խանգարումներով ուղեկցվող հիվանդությունների դեմ: «Ես երրորդ կարգի հաշմանդամություն ունեմ: Դիմել էի մեր մարզի առողջապահության վարչությանը, Ջերմուկի ուղեգիր տրամադրեցին: Սկզբում կմտածեի, թե հեռու է, ցուրտ է, վայրժե չգամ, հրաժարվիմ, բայց հիմի շատ գոհ եմ, որ եկա, մյուս կողմից էլ աղջիկս համոզեց, թե Ջերմուկի ջուրը իմ հիվանդությանս դեպքում ամենալավ դեղն է: Մի շաբաթ է ըստեղ եմ, շատ հոգատար վերաբերմունք կտեսնիմ անձնակազմի կողմից: Օրը երեք անգամ պրոցեդուրաները կստանանք, կհասնինք սրահ, ջուրը կխմենք, կամ հետներս կբերենք առողջարան: Մնունդն էլ ըստեղ լավ է: Էնթան շատ բան կդնեն սեղանին, որ կեսը տեղը կմնա: Եթե հնարավորություն եղներ ամեն տարի գալու, ամեն տարի էլ կգայի, հատկապես ամռանը կուզենայի Ջերմուկ գալ, հրաշալի բնություն ունի, հրաշալի օդ ու ջուր»:



## Մշակույթն ու սպորտը

Վայոց Ձորի մարզում 2010 թվականին գործել են **ավելի մեծ թվով** մարզական խմբեր, քան նախորդ երկու տասնամյակների ընթացքում: 2010 թվականին Վայոց Ձորում գործել են վեց անգամ ավելի շատ մարզական խմբեր, քան 2003 թվականին:

Մարզական կազմակերպությունների և խմբերի թվաքանակը Վայոց Ձորի մարզում




Եթե 2003 թվականին Վայոց Ձորի մարզի գյուղական համայնքներում ոչ մի մարզական խումբ չկար, ապա 2010 թվականին մարզի գյուղական համայնքներում գործում էին **32 մարզական խմբեր**:

2010 թվականին Հայաստանի Հանրապետության ամենափոքր բնակչություն ունեցող մարզի՝ Վայոց Ձորի գյուղական համայնքներում գործում էին գրեթե **սույնքան** մարզական խմբեր, որքան հանրապետության հինգ մարզերում միասին:

2010 թվականին հանրապետության գյուղական համայնքներում մարզիկների թվաքանակով Վայոց Ձորի մարզը զիջում էր միայն Կոտայքի և Շիրակի մարզերին:

Հանրապետության մարզերում մարզիկների թիվը նախորդ տասնամյակի ընթացքում ամենաբարձր տեմպով ավելացել է Վայոց Ձորում. 2010 թվականին Վայոց Ձորի մարզում մարզիկների թվաքանակը 2003 թվականի համեմատ գրեթե քառապատկվել է:

ՀՀ մարզերի գյուղական համայնքներում մարզիկների քանակը (մարդ)




**2010 թվականին Վայոց Ձորի մարզի գյուղական համայնքներում մարզիկների թիվը 2004 թվականի համեմատ քառապատիկ ավելացել է:**

2003-2010 թվականներին Վայոց Ձորի քաղաքային համայնքներում մարզիկների թվաքանակը **եռապատկվել է:**

2010 թվականին Վայոց Ձորի մարզում գործում էր **երեքուկես անգամ ավելի շատ** մարզիչ, քան 2003 թվականին: Եթե 2003 թվականին Վայոց Ձորի

Մարզիկների թվաքանակը Վայոց Ձորի մարզի գյուղական վայրերում (մարդ)





**Զերմուկի գերժամանակակից հյուրանոց-ջրաբուժարանի կառույցը**



**Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը և ՀՀ տարածքային կառավարման Նախարար Արմեն Գևորգյանը ծանոթանում են Զերմուկում անցկացվող ցուցահանդեսի նյութերին**

գյուղական համայնքներում մարզիներ չկային, իսկ 2006 թվականին կային ընդամենը հինգը, ապա 2010 թվականին մարզի գյուղական համայնքներում աշխատում էին 19 մարզիչներ, գրեթե նույնքան, որքան հանրապետության հինգ այլ մարզերի գյուղական համայնքներում միասին:

2007-2011 թվականներին Վայոց Ձորի մարզի **Եղեգնաձոր, Սալլի, Սերս, Վերնաշեն, Ռինդ, Ելփին, Մալիշկա, Վարդահովիտ, Արենի** համայնքներում հիմնանորոգվել են մշակույթի տներ, **Թառաթումբ** համայնքում կառուցվել է մշակույթի նոր տուն:

Հիմնանորոգվել են Վայոց Ձորի մարզային գրադարանը **Եղեգնաձոր** քաղաքում, **Զերմուկի** քաղաքային գրադարանը, **Քարկոփի վանքի** հուշակոթողը՝ **Խաչիկ** համայնքում, **Սմբատաբերդն** ու **Ցախաց քարի վանքը՝ Արտաբույսք** համայնքում, վերակառուցվել է **Արենի** համայնքի մարզադահլիճը, վերանորոգվել են համայնքային կենտրոններ **Չեղեա** և **Արտավան** համայնքներում:

**Եղեգնաձոր** քաղաքում կառուցվել է տուրիզմի կենտրոն, իսկ **Զերմուկ** քաղաքում վերանորոգվել է Երիտասարդական կենտրոնը: 2007 թվականին օծվել է Զերմուկ քաղաքի նորակառույց **Սուրբ Գայանե եկեղեցին**:

2008 թվականին, վերանորոգումից հետո, Ազգային պատկերասրահի՝ Զերմուկի 35-ամյա մասնաճյուղը համալրվել է շուրջ **20 գեղանկար և քանդակ** ստեղծագործություններով, որտեղ ներկայացված է նաև 20-րդ դարի հայկական



**Հայ միջնադարյան ճարտարապետության  
մարգարիտը՝ Նորավանք, XIII-XIVդդ.**

Կերպարվեստը՝ դարասկզբից մինչև մեր օրերը՝ ընդգրկելով նաև սփյուռքահայ արվեստագետների գործեր:

2010 թվականին Օրբելյան իշխանական տան եկեղեցանիստ **Նորավանքի վանքային համալիրում** բացվեց Մոմիկ ճարտարապետի թանգարանը:

2011 թվականին **Եղեգնաձոր** քաղաքում կառուցվել է լողավազան:

Վայոց Ձորի մարզում կա մոտ **600 եկեղեցի**, այն հարուստ է հանքային ջրերով, զարգացած է գինեգործությունը, այստեղ է գտնվում աշխարհի ամենահին գինու գործարանը:


2011 թվականին **Արենի** համայնքում արդեն երրորդ տարին անընդմեջ անցկացվել է գինու փառատոն: 2011 թվականին զբոսաշրջիկների թիվը փառատոնի ընթացքում **գրեթե կրկնապատկվել է՝** հասնելով 5,000-ի՝ փառատոնին մասնակցելու նպատակով զբոսաշրջիկներ են ժամանում Ռուսաստանից, Ուկրաինայից, Էստոնիայից, Իսպանիայից, Ֆրանսիայից: Արենի գյուղի շուրջ 540 տնտեսություններից 80-ը մասնակցեցին փառատոնին՝ սեփական տաղավարներով ու պատրաստած գինիներով, ինչպես նաև ութ գինեգործական կազմակերպություն Չայաստանից և յոթը՝ Արցախից:



Եղեգնաձորի հիմնաստորոգված մշակույթի տունը



Զերմուկի ճոպանուղին



Նախնադարյան բնակատեղի Արենիում



Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում





Մասնագիտությամբ աշխարհագետ, գլածորցի Նորիկ Մկրտչյանը դեռ 90-ականներին վստահ էր, որ տուրիզմը Հայաստանի համար հեռանկարային ճյուղ է տնտեսության զարգացման առումով: «Ես ուսանող ժամանակ նույնիսկ կուրսային աշխատանք եմ գրել այդ թեմայով: Հայաստանի տնտեսական ապագան մշտապես տեսել եմ տուրիզմի ոլորտում: Սա դրսից ֆինանսներ բերող ոլորտ է: Մեր երկիրն այդ պոտենցիալն ունի, դա ինչ որ սպառվող հումք չէ, պարզապես պետք է անընդհատ միջոցներ մտածել այն զարգացնելու համար»,- ասում է Նորիկ Մկրտչյանը:

1991 թվականին ավարտելով Երևանի պետական համալսարանի պատմա-աշխարհագրական ֆակուլտետը՝ Նորիկը տասնվեց տարի աշխատել է Եղեգնաձորի թիվ 1 դպրոցում: Երեք տարի առաջ, Եվրամիության աջակցությամբ Վայոց ձորի երկու քաղաքներում՝ Եղեգնաձորում և Վայքում ստեղծվեցին տուրիզմի կենտրոններ: Տնօրենի հրավերով, Նորիկը ստեղծման օրվանից, Եղեգնաձորի կենտրոնում որպես համակարգող է աշխատում: «Սա միայն կենտրոն չէ,- ներկայացնում է Նորիկը,- նաև հյուրանոց է: Եռահարկ շենքի վերին երկու հարկերը զբաղեցնում են գեղեցիկ կահավորված, ստանդարտներին համապատասխանող հյուրանոցային համարները: Սա հնարավորություն է ընձեռում Եղեգնաձոր մտնող զբոսաշրջիկին թե՛ տուրիստական երթուղիների հարցում օգնել, թե՛ գիշերակացն ապահովել»:


Ըստ Նորիկ Մկրտչյանի՝ Վայոց ձորը զբոսաշրջության առումով մեծ ներուժ ունի: Միայն մեկ թերություն կա, որ ակտիվություն, զբոսաշրջային շարժ նկատվում է միայն ամռան ամիսներին: Պետք է այնպես անել, որպեսզի տարին բոլոր տուրիստների հոսքը Ջերմուկ, Եղեգնաձոր և Վայք չպակասի:

«Ամենահարուստ միջնադարն ունեն Սյունիքն ու Վայոց ձորը որ կարող է հետաքրքրել այսօր զբոսաշրջիկին, անհրաժեշտ է այդ ամենը շահեկան լույսի ներքո ներկայացնել: Պետական և մասնավոր հատվածները երբ համագործակցում են, արդյունքը նկատելի է լինում: Տեսե՛ք, Ջերմուկում մենք արդեն ունենք ճոպանուղի, որ մարդկանց ձմռանն էլ է հրապուրում, առողջարաններն իրենց հերթին են շարժն ապահովում և այլն: Հիմա պետք է մտածել Եղեգնաձորի և Վայքի ուղղությամբ, որպեսզի տուրիզմը դառնա մեր երկրի համար շուրջ տարին եկամուտ ապահովող ճյուղ տնտեսությունում»:



## Սոցիալական վիճակը

Յայաստանում յուրաքանչյուր հարյուր նպաստառու ընտանիքներից երկուսը Վայոց Ձորի մարզում են: Վայոց Ձորում **տարեց-տարի նվազել է** նպաստառու ընտանիքների թիվը. 2000-2010 թվականներին՝ տասը տարում, նպաստառու ընտանիքների թիվը Վայոց Ձորի մարզում նվազել է շուրջ երկու երրորդով: 2010 թվականին Վայոց Ձորի մարզում նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ նպաստառու ընտանիքների թիվը նվազել է շուրջ մեկ քառորդով:



2011 թվականին Վայոց Ձորի մարզում տասը հազար բնակչի հաշվով գրանցվել է **45 տոկոսով ավելի քիչ** հանցագործություն, քան միջինը հանրապետությունում և կրկնակի պակաս, քան հարևան Վրաստանում:

2009 թվականին Վայոց Ձորի մարզի համայնքներում **3 հազար** սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ ստացան Ձմեռ պապից խնդրած իրենց ամանորյա նվերները:

2011 թվականին նախկին ԽՍՀՄ խնայբանկում ունեցած ավանդների դիմաց Վայոց Ձորի մարզում փոխհատուցում է ստացել **ավելի քան 400 քաղաքացի**:



Մալիշկա գյուղի թիվ 2 դպրոցի զինղեկ Սմբատ Շահբազյանը արցախյան գոյամարտի մասնակիցներից է: Խորհրդային տարիներին ծառայել է Խաբարովսկի մարզում, ծովային հետևակում, որպես ջրկատի հրամանատար: Աֆղանստանում, Զաբուլի մերձակայքում երկու ամիս մասնակցել է մարտական հատուկ գործողությունների: «Դեռ քսան տարեկան չկայի, բայց արդեն գիտեի ինչ բան է իրական պատերազմը, ընկերոջ մահը: Այն, ինչ շատերը կհնդում էին տեսել, ես դրա ականատեսն եղա Աֆղանստանում ու արդեն ծանոթ էի վառողի հոտին: Դա ինձ շատ պետք եկավ արցախյան պատերազմի ժամանակ, երբ սեփական նախաձեռնությամբ կազմավորեցի Մալիշկայի ջրկատը ռազմական գործողություններին մասնակցելու համար»,— պատմում է Սմբատ Շահբազյանը:

Մարտական ջրկատը կազմված՝ տանաչորս հոգի Մալիշկա և տասնմեկ հոգի Արենի գյուղերից, Սմբատի հրամանատարությամբ նախ մասնակցեց Խաչիկ, Արենի, Խնձորուտ գյուղերի պաշտպանական դիրքերի մարտական գործողություններին: 1991-92 թվականներին ջրկատն արդեն ընդգրկվել էր կանոնավոր բանակի կազմում և մասնակցում էր Մարտակերտի, Դրմբոնի, Մաղահուզի տարածքներում ընթացող ռազմական գործողություններին:

«Այդ ժամանակ ես արդեն հատուկ գնդի, Եղեգնաձորի վաշտի հրամանատարն էի: Զուբաթլիի տարածքի Կորբա դիրքերի հրամանատարն եմ եղել 1992 թվականին: Ամենածանրն ինձ համար 92-ի սեպտեմբերի 30-ի մարտերն էին: Այդ գիշեր ես կորցրեցի իմ հինգ մարտիկներին, հինգն էլ Արենի գյուղից էին: Հակառակորդը հարձակման անցավ գիշերով՝ զինված գիշերային դիտասարքերով, իսկ մենք ընդամենը մի հատ Դրագունովի դիպուկահար հրացան ունեինք, որ ցերեկն էինք օգտագործում: Ծանր մարտ էր, բացի զոհված տղաներից յոթ հոգի էլ վիրավորվեցին գիշերային այդ մարտում»,—պատմում է Սմբատը:

Մարտական ուղին մալիշկացի Սմբատ Շահբազյանի համար հարթ չի անցել: Նախկին զինվորականն այդ ուղին պատվով հաղթահարելու համար արժանացել է բազմաթիվ պարգևների՝ «Դրաստամատ Կանայան», «Անդրանիկ Օզանյան» մեդալների, «Մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանի, «Հատուկ գունդ» շքանշանի, պարգևներ է ստացել նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից: Վերջերս բանակի քսանամյակի կապակցությամբ պարգևատրվել է հորեյանական մեդալով:

Հիմնամյա Սմբատ Շահբազյանն ամուսնացած է, ունի չորս զավակ: 1994 թվականից հարազատ Մալիշկայում դպրոցականներին զինվորական պատրաստվածություն է ուսուցանում: «Մեր երեխաները, տղա թե աղջիկ, պարտավոր են զենքի հետ վարվել իմանալ: Մենք սահման ենք պահում, մենք պարտավոր ենք հարկ եղած դեպքում զինվորագրվելու հայրենիքի պաշտպանությանը,— ասում է Սմբատը,— իհարկե ցանկալի է, որ խաղաղությունը թագավորի և զինվորականը գործ չունենա, մեր երեխաները վառողի հոտը չառնեն տա Աստված, բայց կյանքն Ենպիսի բան է, որ թշնամիներով շրջապատված երկրում ապրելով, մենք միշտ պետք է պատրաստ լինենք դրան»:



**Ա**տում են, Վերածննդի խոշորագույն հանճարին՝ Միքելանջելոյին, հայրը կոչում էր «անպիտան քարտաշ»: Հայ ճարտարապետության վերածննդի հանճարի սկիզբը նույնպես քարտաշությունն էր. տասնվեցամյա պատանուն քարը ենթարկվում էր մոմի պես ու ծաղկում՝ նրա մատների հպումից, դառնում ասեղնագործ խաչքար ու վիմափոր խորան:

Իր որևէ նախորդի կամ ժամանակակցի, անգամ ինքն իրեն երբևէ չկրկնած Մոմիկի ծաղկած չորս ավետարաններն ու պատկերա- քանդակներից յուրաքանչյուրը, թերևս, մեծագույն վայոցճորցուն կարող էին դասել հայ մշակույթի անմահների կաճառում:

Սակայն Մոմիկը անկրկնելի է ոչ միայն իր արվեստով ու ստեղծագործությամբ, այլև իր հարազատ հողի հանդեպ անմնացորդ սիրով ու պողպատի պես ամուր հավատով: Ժամանակի պայծառ արքունիքներում ճանաչում գտած վայոցճորցի հանճարը մերժում է արքաների ու իշխանների՝ յուրաքանչյուր վարպետի համար բաղձալի ու պատվաբեր առաջարկները, վերադառնում է Վայոց Ձոր, որ ողջ կյանքն ապրի այստեղ ու իր արվեստն անմնացորդ նվիրաբերի իր երկրին ու իր ժողովրդին: Իսկ երբ օրնիբուն աշխատանքում տեսողությունը կորցրած Մոմիկին կարեկցում էին ու խրատում, վարպետը մեղմ ժպտում էր միայն ու վստահ պատասխանում, որ հավատի լույսով կվերագտնի աչքի լույսը: Եվ վերագտավ ու ստեղծեց բազում անմահ գործեր, որոնք սերունդների հպարտությունն են, օտարների զարմանքն ու ձոն՝ սեփական ուժերին վստահ Մարդուն:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Վայոց Ձորի մարզում առավել նկատելի ձեռքբերումները տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Գրքույկը ներկայացնում է նշված ժամանակահատվածում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար խիստ բացասական հետևանքներ թողած համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հաղթահարման ընթացքն ու արդյունքները: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերն ու դրանց արդյունքները՝ ուղղված հանրային և մասնավոր հատվածների, հասարակական և բարեսիրական կառույցների, ինչպես նաև զարգացման միջազգային գործըկերների՝ ճգնաժամի պայմաններում սուղ միջոցների և մասնատված ուժերի համախմբանն ու արդյունավետ օգտագործմանը՝ ի շահ Վայոց Ձորի մարզի տնտեսության և բնակիչների: Գրքույկի գլխավոր հերոսը վայոցձորցին է, ում ստեղծագործ ուժն ու եռանդը, լավատեսությունը, դրական փոփոխությունների հանդեպ հավատն ու դրանց հասնելու վստահությունը՝ հնարավոր են դարձրել այն բոլոր ձեռքբերումները, որոնք ներկայացված են գրքույկում: